

Յուրաքանչյուրի պարտքն է ընտրակաշառքի դեմ պայքարել
Սկզբնաղբյուր՝ <http://armkur.am/765305/>

ԿԸՀ նախագահ Տիգրան Մուկուչյանի հետ «Ժողովուրդ» օրաթերթին ամփոփել է անցնող 2017 թվականը:

-Պարոն Մուկուչյան, այս տարվա ամենահիշարժան իրադարձությունների թվում առաջինը շեշտում են խորհրդարանական ընտրությունները: Եւ, ընդհանրապես, 2017 թվականը ընտրություններով «առատ էր»: Ինքներդ ընտրությունների որակից գո՞հ եք: - 2017թ. ընթացքում ոչ միայն համապետական ընտրություններ ունեցանք, այլև տեղի ունեցան Երեւանի ավագանու ընտրություններ, միաժամանակ 90 համայնքներում տեղի ունեցան ՏԻՄ ընտրություններ: Եւ որպեսզի ծավալային առումով ավելի պատկերավոր լինի, ասեմ՝ թեև խոսքը վերաբերում էր 90 համայնքի, բայց ընտրական տեղամասեր էին կազմավորվել 380 բնակավայրերում, որովհետև 34 համայնքներ խոշորացված էին: Այս ամենը բավական ընդգրկուն էր եւ աշխատանքի կազմակերպման, եւ ծավալի առումով: 2016թ. ընդունվել էր նոր Ընտրական օրենսգիրք, որի կանոնակարգումներին համապատասխան անցկացվեցին ԱԺ ընտրությունները, Երեւանի ավագանու եւ մյուս համայնքների ՏԻՄ ընտրությունները: Եւ ԸՕ կանոնակարգումները մեզանում կյանքի կոչվեցին լիարժեք ծավալով, եւ ըստ էության կայացած ընտրությունները կազմակերպչական առումով, օրենսդրական լուծումների առումով աննախադեպ էին: Աննախադեպ էին, որովհետև առաջին անգամ մեզանում իրականացվեց տեխնիկական սարքավորումների կիրառմամբ ընտրողների գրանցման գործընթաց, համապետական ընտրությունների ժամանակ 1500 տեղամասերում կազմակերպվեց քվեարկության ընթացքի եւ արդյունքների ամփոփման ուղիղ առցանց հեռարձակում: Երեւանի ավագանու ընտրությունների ժամանակ, չնայած օրենքով չկար նման պարտադրանք, բոլոր տեղամասային կենտրոններից իրականացվում էր առցանց հեռարձակում: Ընդհուպ մինչև երապարակվեցին ընտրողների ստորագրած ցուցակները: Սա ինքնին խոսում է այն մասին, որ ընտրությունները հրապարակայնության ապահովման տեսանկյունից իրավամբ աննախադեպ էին: Այս ամենն առաջին անգամն էր կիրառվում՝ ապահովելով ընտրական պրոցեսների թափանցիկությունը: Մրանով էր պայմանավորված ընտրական գործընթացների հանրային ընկալումը:

-Իշխանությունները շեշտում են, որ աննախադեպ լավ ընտրություններ են անցկացրել, ընդդիմության մի հատվածը պնդում էր, թե, ընդհակառակը, կեղծիքները շատ էին: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ վերջնական զեկույցում էլ նշված է. «Ընտրակաշառքն ու ընտրողների նկատմամբ ճնշումների մասին վստահելի տեղեկությունները ստվերել են այս տարվա ԱԺ ընտրությունների ընթացքը»:

-Ես չեմ ցանկանա առանձնացնել որեւէ առանձին նկատառում, որեւէ առանձին դիրքորոշում: Ես կցանկանայի ընդամենը նշել հետեւյալը. անհնար է խոսել ընտրական գործընթացի մասին բացարձակ տեսանկյունից, հատկապես քվեարկության օրը, երբ հաշված ժամերի ընթացքում իրար հետ իրավահարաբերությունների մեջ են մտնում հարյուր, հազարավոր քաղաքացիներ: Այդ դեպքում միշտ էլ հնարավոր են ինչ-ինչ իրավիճակներ, տեղի են ունենում առանձին խախտումներ, ԸՕ կանոնակարգումները բոլորի կողմից ամբողջական ու լիարժեք չեն կիրառվում: Բայց ես կարծում եմ՝ ԸՕ-ով

ամրագրված լուծումները եւ լիարժեք կյանքի կոչումը նպաստեցին ընտրությունների նկատմամբ լիակատար հանրային վերահսկողության իրականացմանը եւ թափանցիկության ապահովմանը: **-Ընտրակաշառք բաժանելը կամ ընտրողների նկատմամբ ճնշումները, վարչական ռեսուրսի կիրառումը տեղամասերից դուրս էր արվում, եւ այդ մասին խոսում էին համատարած:**

-Հանրորեն վտանգավոր որեւէ արարքը, հանցագործությունը, այդ թվում՝ ընտրակաշառքը միանշանակ մերժելի է: Այդ երեւույթները հանդիսանում են քրեորեն պատժելի արարքներ, ամրագրված են քրեական օրենսգրքում: Երբ մենք խոսում ենք նման երեւույթների մասին, պետք է առաջին հերթին նկատի ունենանք նաեւ այդ երեւույթը կանխող միջոցները: Երբ քաղաքացիները խոսում են այդ երեւույթների մասին, պետք է ոչ թե պարզապէս բարձրաձայնեն՝ բարձրաձայնելու համար, այլ եթե իրականում առկա են փաստեր, պետք է այդ մասին պատշաճ դիմեն իրավապահներին: Եթե մեզանից յուրաքանչյուրն իր պարտքն է համարում պայքարել ընտրակաշառքի դեմ, ապա պետք է մերժողական վերաբերմունք դրսևորի՝ այդ երեւույթը մեկընդմիջտ արմատախիլ անելու համար:

-Խնդիրն էլ այն է, որ կողմնակի մարդուն ընտրակաշառքի մասին լուրն ապացուցելը դժվար է, որովհետեւ այստեղ երկուստեք են շահագրգռված, եւ այդ գումարը վերցնողը չի դժգոհի, չի հայտնի կատարվածի մասին իրավապահներին:

-Ես Ձեզ հակառակ հարցը տամ՝ երկուստեք շահագրգռվածության դեպքում որտեղի՞ց են լինում նման հայտարարություններ, բարձրաձայնումներ:

-Դե, ոչ թե դժգոհում են, այլ պատմում են, թե ինչպէս կարողացան այս կամ այն թեկնածուի շտաբից ստանալ փողը: Հայտարարություն լինում է, բայց ոչ դժգոհության տեսքով:

-Ցավոք, բայց մեզանում շատ ենք տեսնում, երբ ընտրական գործընթացում այս կամ այն երեւույթի մասին հայտարարությունները հիմնված են լինում անհասկանալի, չբացահայտված, չբարձրաձայնվող աղբյուրների, քան կոնկրետ փաստերի վրա: Իսկ եթե լինում են փաստեր, այդ մասին բարձրաձայնողը ներկայացնում է նաեւ փաստերը:

-Քաղաքական կամքի առկայության դեպքում իշխանությունները կարո՞ղ են բացառել ընտրակաշառքը, թե՛ ոչ:

-Ես միանշանակ համոզված եմ՝ ընտրակաշառքի դեմ պայքարելու քաղաքական կամք միանշանակ առկա է, դրա դրսևորումն է այդ երեւույթի քրեականացումը, թե քրեական օրենսգրքում այնպիսի իրավակարգավորումների ամրագրումը, որոնք նպատակ ունեն բացահայտելու հանցագործությունը:

-Ուրիշի փոխարեն քվեարկության կամ կրկնաքվեարկության փորձեր եղան եւ բացահայտվեցին, բայց ընտրակաշառք տալու համար որեւէ մեկը չձեռքակալվեց:

-Ընտրակաշառքի մասին բոլոր հայտարարությունները, ՁԼՄ-ներում հրապարակումներն ուսումնասիրվել են իրավապահ մարմինների կողմից: Ինձ ծանոթ չէ որեւէ դեպք, որեւէ հայտարարություն, որ դուրս մնացած լինի իրավապահների ուշադրությունից: